ՄՍԵՐՅԱՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական հավաքածուի բաղկացուցիչ մասերից մեկն է նաև Մսեր (1808—1873), Զարմայր (1836—1899) և Լևոն (1867—1933) Մսերյանների անձնական հավաքածուն, որը, ներկա դրությամբ, ամփոփում է XIV—XIX դդ. ընդօրինակված բազմազան բովանդակությամբ 65 մատյան (պայմանականորեն №№ 1—65), չխոսելով արդեն նրանց հարուստ արխիվի մասին, որը ամփոփում է տարբեր բնույթի 2466 վավերագիր[1]։

Նշված 65 մատյանները բաժանվում են երկու որոշակի խմբերի՝ ինքնաձեռագրեր և ձեռքբերումներ.

Ա. Ինքնաձեռագրեր—Այս խմբի մեջ մտնում են 31 մատյան (№№ 4, 20, 23, 25—26, 28, 32—46, 48, 51—52, 56, 58—59, 62—65). դրանք բոլորն էլ, առանց բացառության, կամ Մսեր Մսերյանցի ինքնագիր աշխատություններն են, կամ այլ ձեռագրերից իր իսկ ձեռքով 1829—1866 թվականների ընթացքում կատարված ընդօրինակություններ։

Բ. Ձեռքբերումներ—Այս խմբի մեջ մտնում են 34 մատյան (№№ 1—2, 6—19, 21—22, 24, 27, 29—31, 47, 49—50, 53—55, 57, 60—61). դրանք բոլորն էլ, սակավ բացառությամբ, հին ձեռագրեր են և ձեռք են բերել տարբեր ժամանակներում հայր, որդի և թոռ Մսերյանները։

ա. Մսեր Մսերյանցի ձեռքբերումները—13 (№№ 1—2, 6, 9, 17, 19, 21, 24, 27, 29, 31, 47, 53)։ Այս 13 ձեռագրերից 9-ի վրա (№№ 1—2, 6, 9, 17, 19, 24, 27, 31) Մսեր Մսերյանցը թողել է իր ստորագրությունը՝ «Մ. Մսերեանց», «Մսեր Մսերեանց» կամ «Մսուր Մսերեանց». դրանցից երեքն ունեն նույնիսկ հիշատակագրություն. № 1. «Ի 1834 ամի. ի մարտ ամսոյ է (7), ի Զմիւռնայոյ ի Մսուրայ Գրիգորեանէ գնեալ», № 2. «Մսուր գպիրն էառ գիս ի տեղի արծաթոյ, ի 20 մարտի, 1829 ամի ի սուրբ գահս էջմիածին», № 3. «Մսուրայ գպրին եմ Գրիգորեան Զմիւռնացւոյ. այլ ոք իւրացուցանել մի իշխեսցի. ի 1829 ամի տեառն, ի մարտ 20»։ Մյուս չորս ձեռագրերը (№№ 21, 29, 47, 53) թեև ստորագրված չեն, սակայն դրանց լուսանցքներում և այլուր Մսերյանցի ձեռքով կատարված են նշումներ. այսպես, օրինակ, № 21 ձեռագրում Ներսես Շնորհալու հանելուկների մոտ գրված են դրանց լուծումները և այլն։

բ. Զարմայր Մսերյանցի ձեռքբերումները—1 (№ 13)։ Ձեռագիրը, ըստ Զարմայր Մսերյանցի թողած ռուսերեն մակագրության, ձեռք է բերված 9. VI. 1858-ին։ Այն Զ. Մսերյանցի «№ 1» ձեռագիրն է, որի թվահամարը դիտավորյալ քերված է։ Ասենք, որ սա միակ ձեռագիրն է, եթե հաշվելու չլինենք նորից ժառանգած № 25 ձեռագիրը, որի վրա կարելի է տեսնել Զ. Մսերյանցի ստորագրությունը։

գ. Լևոն Մսերյանցի ձեռքբերումները—5 (№№ 8, 10, 15, 18, 54)։ Այս ձեռագրերը ստորագրված են Լ. Մսերյանցի կողմից և որևէ հետք չունեն նախորդներին պատկանելու վերաբերյալ։ Տարակույս չի կարող լինել, որ սրանք ոչ թե ժառանգված են, այլ ձեռք են բերված ինքնուրույնաբար։

դ. Անորոշ—15 (№№ 3, 5, 7, 11—12, 14, 16, 22, 30, 49—50, 55, 57, 60—61)։ Այս 15 ձեռագրերի վրա երեք սերունդներից ոչ մեկի ստորագրությունը չկա և դժվար է ասել, թե դրանցից որը ով է ձեռք բերել։ Կրկնենք, որ խոսքը ոչ թե պատկանելության մասին է, այլ՝ ձեռքբերման։

Ինչպես պապի՝ Մ. Մսերյանցի, այնպես և հոր՝ Զ. Մսերյանցի արխիվները, նրանց մահից հետո, ժառանգել է Լ. Մսերյանցը, իսկ վերջինիս մահից հետո ժառանգորդները, ինչպես նախորդների, այնպես և Լ. Մսերյանցի արխիվը ամբողջությամբ նվիրաբերել են Մատենադարանին։ Հիշատակված 65 ձեռագրերից 58-ը (№№ 3—58, 60—61) մաս են կազմել այդ արխիվի, որտեղից և դրանք տարբեր նվագներով փոխադրվել են Մատենադարանի ձեռագրատուն.

ա. 1935-ին փոխադրված է 14 մատյան (№№ 6—19)։ Դրանք բոլորն էլ կնքված են «ԷՋՄ[ԻԱԾՆԻ] ՊԵՏ[ԱԿԱՆ] ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԱՐԽԻՒ ՊՐՈՖ. Լ. ՄՍԵՐԵԱՆՑ ՆՈՒԻՐԵԱԼ Ի ԺԱՌԱՆԳՈՐԴԱՑ ԻՒՐՈՑ» բովանդակությամբ կնքադրոշմով։

բ. 1939-ին փոխադրված է 40 մատյան (№№ 20—57, 60—61)։ Այս ձեռագրերը 1939 թ. Մատենադարան մուտք գործած ձեռագրերի գույքամատյանում[2] արձանագրված են համապատասխանորեն 68—31 թվահամարների ներքո։

գ. 1940-ին փոխադրված է 1 մատյան (№ 58)։

դ. 1950-ին փոխադրված է 3 մատյան (№№ 3—5)։ Այս ժամանակ Մսերյանների արխիվն արդեն մշակված էր և սույն մատյան-

1 Մաշտոցի անվ. Մատենադարանի արխիվ, Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 188—209, վավ. 1—2466։

2 Մաշտոցի անվ. Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, № 13։

ները ունեին համապատասխան թվահամարներ՝ 197/363, 198/365, 198/368։

Ինչ վերաբերում է մնացյալ 7 ձեռագրերին (№№ 1—2, 59, 62—65), ապա դրանցից առաջին 2-ը (№№ 1—2) Մատենադարան են մուտք գործել անցյալ դարի վերջերին և մտել «Գեվորգյան» կոչվող հավաքածուի մեջ (№№ 157, 1232), երրորդ ձեռագիրը (№ 59) Մատենադարանին է հանձնել Փառանձեմ Տեր-Մկրտչյանը 1946-ին Մոսկվայից, իսկ հաջորդ 4-ը (№№ 62—65) նվիրաբերել է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը 1960-ին՝ մի շարք այլ ձեռագրերի հետ։

Հին և նոր թվահամարների բերված համեմատական տախտակի օժանդակությամբ կարելի է այդ ձեռագրերի նկարագրությունները գտնել Մատենադարանի երկհատորանոց ձեռագրացուցակում[3]։

Ստորև նշում ենք մեզ հայտնի բոլոր այն անձանց ու հաստատությունների անունները, որոնք տիրապետել են այդ ձեռագրերը նախքան Մսերյանների հավաքածուի մաս կազմելը և այն անձանց ու հաստատությունների անունները, որոնք ժառանգել են դրանք մինչև Մաշտոցի անվան Մատենադարանում հանգրվանելը.

[Ալբունյանց] Եփրեմ վրդ., էջմիածին—Արտազի Թադեոս առաքյալի վանք—Պետերբուրգ, 1824—1853 թթ.—1 (№ 6/6493)։

Աիվերդյանց Գեորգ. [Թիֆլիս], XIX դ.—1 (№ 38/8846)։

Գեղամյան Սահակ սրկ., էջմիածին, 1822 թ.—1 (№ 5/4197)։

Էմին Մկրտիչ, Մոսկվա, 1853 թ.—1 (№ 9/6537)։

Էնֆիաճյան Ավետիք և Համբարձում զրավաճառ եղբայրներ, Թիֆլիս, 1848 թ.—1 (№ 7/6502)։

Համեմատական տախտակ Մսերյանների ձեռագրերի հին և նոր թվահամարների

№№ ը/կ	Մատնդրն	№№ ը/կ	Մատնդրն	№№ ը/կ	Մատնդրն	№№ ը/կ	Մատնդրն	№№ ը/կ	Մատնդրն
1	2976	14	6812	27	8805	40	8849	53	8891
2	3057	15	6871	28	8806	41	8850	54	8892
3	3755	16	6937	29	8807	42	8851	55	8893
4	3834	17	6938	30	8808	43	8852	56	8894
5	4197	18	7041	31	8809	44	8853	57	8895
6	6493	19	7045	32	8840	45	8854	58	9012
7	6502	20	9651	33	8841	46	8855	59	9261
8	6532	21	8652	34	8842	47	8856	60	9984
9	6537	22	8682	35	8843	48	8857	61	9985
10	6675	23	8683	36	8844	49	8858	62	10002
11	6691	24	8746	37	8845	50	8859	63	10005
12	6730	25	8803	38	8846	51	8860	64	10006
13	6737	26	8804	39	8848	52	8890	65	10007

Թումա վրդ. Դողրնեցի, էջմիածին, 1738 թ.—1 (№ 47/8856)։

Իսահակ աբեղա [Մաղկարար, էջմիածին], 1811 թ.—1 (№ 9/6537)։

Խուրով Գեորգ Մելքիսեդեկյան, Ասորահան, 1829 թ.—1 (№ 3/3755)։

Կամսարական Եզնակ Միրզա Թադեոսյան [Աշտարակեցի, էջմիածին], 1821 թ.—1 (№ 19/7045)։

Հովհաննես Միրզայան Վանանդեցի, Զմյուռնիա, 1807 թ.—1 (№ 31/8809)։

Հովհաննես վրդ., Գորի, XIX դ.—1 (№ 54/8892)։

Հովհաննիսյան Աշոտ, Երևան, 1960 թ.—4 (№№ 62/10002, 63/10005, 64/10006, 65/10007)։

Մեսրոպ ֆն., Տարև, 1741 թ.—1 (№ 1/2976)։

Մինաս, որդի տեր Առաքելի, XIX դ.—1 (№ 22/8682)։

Մոսկվա, Լազարյան ճեմարան—1 (№ 7/6502)։ Ճեմարանի 1861 թ. տպագիր ցուցակի[4] № 8 ձեռագիրն է։

---

[3] «Ցուցակ ձեռագրաց», հատ. Ա, Երևան, 1965, հատ. Բ, Երևան, 1970։

[4] Catalogue des livres de la Bibliothèque fondamentale de l'institut Lazareff des langues, Orientales, Moscou, 1861.

Մուքել, տեր (ստորագրություն և վարդապետական կնքադրոշմ), XIX դ.—*1 (№ 24/8746)*։

Շահիաբունյանց Հովհաննես վրդ., Մոսկվա, 1844 թ.—*2 (№№ 50/8859, 51/8860)*։

Պողոս, 1730 թ.—*1 (№ 7/6502)*։

Ռոտինյանց Մ. Գ., [Թիֆլիս], XIX դ.—*1 (№ 38/8846)*։

Ստեփաննոս Կյումյուշխանեցի, Կ. Պոլիս, 1973 թ.—*1 (№ 11/6691)*։

[Վարդազարյանց] Գրիգոր վրդ. Աշտարակեցի, Էջմիածին, 1821 թ.—*1 (№ 19/7045)*։

Տեր-Մկրտչյան Փառանձեմ, Մոսկվա, 1946 թ.—*1 (№ 59/9261)*։

Փանյանց Մելքոն Գասպարի, XIX դ.—*1 (№ 55/8893)*։

Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿՆԻՔ-ՄԱՏԱՆԻ ՂՐԻՄԻՑ

1978 թ., գյուղատնտեսական հողային աշխատանքներ կատարելիս, Բախչիսարայի շրջանի Բոգատիր գյուղի մոտ քանդվել էր ուշ միջնադարյան սալաքարային մի դամբարան։ Բուլդոզերավար Ա. Պ. Լիպատկինը Բախչիսարայի պատմաճարտարապետական թանգարան հանձնեց այդ աշխատանքների ժամանակ հայտնաբերած արծաթե մատանի-կնիք՝ հայերեն արձանագրությամբ, փորագրված սերդոլիկե ներդիրի վրա։ Թանգարանն նա հանձնեց նաև ավերված դամբարաններից դուրս եկած արծաթե կոճակներ և Ղրիմի խաներ Սելիմ Գիրեյ II-ի (1743—1748) և Ղրիմ Գիրեյի (1758—1764, 1768—1769) արծաթե երկու դրամ։

Դամբարանադաշտի պահպանման համար Բախչիսարայի թանգարանի կողմից անցկացվեցին մասնակի պեղումներ։ Դամբարանները գտնվում են Բոգատիր գյուղից մոտ 300—350 մետր դեպի հյուսիս, Բելբեկ գետի ձախակողմյան վտակի աջ ափին, հյուսիսային և հարավարևմտյան կողմերից մանր բլուրներով շրջափակված փոքր հովտում։ Դամբարանադաշտը քրիստոնեական ընդարձակ գերեզմանոց է, որտեղ 1914 թ. սիրող-հնագետ Մ. Ի. Սկուբետովը գրանցել էր միախորան մի մատուռ՝ շրջապատված 165 կրաքարե տապանասալերով։ Դրանցից մեկն ուներ հունարեն[1], իսկ հինգը՝ հայերեն արձանագրություններ։ Վերջիններս թվագրված են եղել 1731, 1737 և 1771 թթ.[2]։ Ներկայումս բոլոր տապանաքարերը, ինչպես և մատուռը, գոյություն չունեն։

1978 թ. աշխատանքների ժամանակ մաքրվել են տեղական կրաքարի սալերով երեսապատված մի քանի դամբարաններ։ Թաղումներին փոքրաթիվ իրերից (արծաթե մանր զարդեր, ապակե մանյակ, գրամներ), ինչպես և տապանաքարերից դատելով դամբարանադաշտը կարելի է թվագրել XVIII դարով, թեև բացառված չէ, որ այն առաջացած լինի ավելի վաղ։ Ամենայն հավանականությամբ գերեզմանոցը գործել է մինչև 1778 թ. և լքվել քրիստոնեական բնակչության հիմնական զանգվածի, ինչպես նաև Բոգատիր գյուղի հույն բնակչության Ա. Վ. Սուվորովի կողմից Ռուսաստան տեղա-



Նկ. 1. Հայերեն արձանագրությամբ կնիք-մատանի Ղրիմի Բոգատիր գյուղից, XVII դ. դամբարանից։

[1] В. В. Латышев, Новые христианские греческие надписи Крыма, ИТУАК, № 54, Симферополь, 1918, էջ 44։

[2] Х. И. Кучук-Иоаннесов, Армянские надписи из Крыма, ИТУАК, № 52, Симферополь, 1918, էջ 44։